


ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ



16 MAY 2013

19813

634.1
4-13

24 SEP 2010

Ն. ԿԱԶԱԿՈՎ

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ

1007
34021

Թարգ. Վ. Մար.
Խմբագրեց Ա. Գրոնոմ
Ա. Ավետիքյան

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը և՛ դրա հետ կապված՝ քաղաքի և գյուղի աշխատավորական լայն մասսաների նյութական դրութեան բարելավումը ավելի բարձր պահանջներ են ներկայացնում՝ այգեգործական մթերքներով նրանց ապահովելու հարցում: Տարեց-տարի աճում է այդ մթերքների նաև արտածումը: Այնինչ մեր այգիները և պարտեզները մեծ մասամբ փոքր են և չունեն ապրանքային տեսակներ: Սովխոզներն ու կոլխոզները այգեգործութեան մեջ առայժմ բռնում են աննշան տեղ: Այգիների և պարտեզների խնամելը մեծ մասամբ կատարվում է շատ վատ: Այդ բոլորը և պայմանավորում է մեր այգիների վերին աստիճանի ցածր բերքատվութիւնը:

Ահա թե ինչու պետք է վճռական պայքար հայտարարվի հանուն սովխոզային այգեգործութեան զարգացման, հանուն այգեգործութեան կոլեկտիվացման, հանուն այգիների բերքատվութեան բարձրացման, հանուն այգեգործութեան ազրոմինիումի անցկացման ինչպես սովխոզներում և կոլխոզներում, այնպես ել չքավոր-միջակ անհատական տնտեսութիւններում: Այգեգործութեան ազրոմինիումի անցկացումը պահանջում է, վոր այդ միջոցառումները միաժամանակ իրագործվեն գյուղի կամ շրջանի բոլոր այգիներում, ինչպես որինակ՝ պտղատու-

ծառերի սնկային հիվանդութիւնները և վնասատուների դեմ տարվող պայքարը: Դրա համար ել այգեգործութեան ազրոմինիմումի անցկացումը անխոգելիորեն կապված է կոլեկտիվացման հետ: Հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել ազրոմինիմումի անցկացման գործին՝ այգիների կոնտրակտացիայի ժամանակ:

Հողը, պտղատու ծառերի բները և սաղարթը խնամելու համար ազրոմինիմումով նախատեսնված ընթացիկ աշխատանքները կատարելու հետ մեկտեղ, պետք է հատուկ ուշադրութիւն դարձնել տունկեր դնելու աշխատանքի արմատական բարելավման՝ վրա (ծառերի տնկում, անարժեք տեսակների վերապատվաստումը արդյունաբերական տեսակներով և այլն):

Այգեգործական ազրոմինիմումը պետք է լայն կերպով քննութեան առնվի և մշակվի կոլխոզնիկները ժողովներում և արտադրական խորհրդակցութիւններում, ըստ վորում ազրոմինիմումի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տեղական փորձնական և գիտական հիմնարկների յեղրակացութիւնները և տեղի պրակտիկայի տվյալները: Այսպիսով յուրաքանչյուր շրջանի ազրոմինիմումը պետք է մշակվի ինքնուրույն կերպով, հաշվի առնելով տեղական պայմանները, առանձնահատկութիւնները, և սպահովումը ինվենտարով, հանքային պարարտանյութերով և վնասատուների դեմ պայքարելու միջոցներով:

Որինակ, աղբի և հանքային պարարտանյութերի բացակայութեան կամ պակասութեան դեպքում, գյուղատնտեսի ցուցմունքներով կարող են կիրառվել այսպես կոչվող «ծածկոցային վարելը», — վոր լայն տարածում են գտել Ամերիկայում, այսինքն այս կամ այն խոտերի ցանումը մարգերի միջանցքներում (վիկա, լյուպին, կարպատյան առվույտ, սոյա և այլն) և աճած

ամբողջ կանաչի վարումը պարարտացման համար: Կարող են ոգտագործվել և ուրիշ պարարտանյութեր, վոր չենք մատնանշում, բայց վորոնք կան տեղերում:

Սովխոզների, կոլխոզների և ջրավոր-միջակ անհատական տնտեսութիւնների համար կարող է սահմանվել տարբեր ազրոմինիմում՝ նայած նրա կենսագործման հնարավորութեանը:

Ազրոմինիմումի անցկացման ժամանակ խոշոր նշանակութիւն է ունենալու աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Անհրաժեշտ է նախատեսնել բրիգադների կազմակերպումն այգու այս կամ այն աշխատանքները կատարելու համար: Դրա համար ել նախորոք հարկավոր է աշխատողներ պատրաստել (զրույցների, կուրսերի, գործնական պարապմունքների, որինակելի սովխոզներում և կոլխոզներում եքսկուրսիաներ կազմակերպելու միջոցներով և այլն):

Ազրոմինիմումի անցկացման ժամանակ պետք է լայն զարգացում ստանան սոցմրցումը և հարվածայնութիւնը: Դրա հետ մեկտեղ պարտադիր կերպով պետք է հաշվի առնել վոր միայն առաջադրութիւնների քանակական կատարումը, այլ և աշխատանքի վորակական կողմը վորն, առանձնապես կարևոր նշանակութիւն ունի այգեգործութեան մեջ (չոր և հիվանդ ճյուղերի ճիշտ կտրում, պայքար վնասատուների դեմ, բերքի ուշադիր հավաքումը և տեսակավորումը և այլն):

Աշխատանքի բարելավման անհրաժեշտութեան և բանվորական ուժի սակավութեան պատճառով, առանձին նշանակութիւն է ստանում այգու տնտեսութեան մեքենացումը (տրակտորներով և ֆրեզներով մարգերի միջատեղերի մշակումը, մոտորային սրակիչների գործադրումը և այլն):

Այգեգործութեան ազրոմինիմումի հարցերի շուրջը պետք է համախմբել հասարակութեան ուշադրութիւնը:

Ազրոմինիմումը պետք է հայտնի լինի լայն մասսաներին, պետք է բացատրվի նրա նշանակությունը այգեգործության բարելավման և բերքատվության բարձրացման գործում, պետք է բացատրվեն նրա իրականացման միջոցները և ժամկետները և այն արտոնությունները, վոր խորհրդային իշխանությունը տալիս է ազրոմինիմումին իրագործող կոլխոզներին և չքավոր-միջակ անհատական տնտեսություններին: Անհրաժեշտ է ազրոմինիմումի իրագործումը դնել հասարակական հսկողության տակ:

Պայքար հանուն ազրոմինիմումի՝ այգեգործության մեջ, դա պայքար է հանուն բերքատվության բարձրացման և նրա վորակի լավացման, դա պայքար է հանուն սոցիալիստական սկզբունքներով կազմակերպվող ժողովրդական վողջ տնտեսության կոլեկտիվացման և բարձրացման: Ազրոմինիմումի անցկացումով մենք կնպաստենք հնգամյակը չորս տարում իրագործելու գործին:

ՎԵՐԱՑՆԵՆՔ ՀԻՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր Միության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմաններում այգեգործությունը պետք է ստանա խոշոր և լայն զարգացում:

Յեթե այժմ Միության այգիների ամբողջ տարածությունը հավասար է 700 հազար հեկտարի, ապա յենթադրվում է սովխոզներում, կոլխոզներում և արտադրական ընկերություններում նոր արդյունաբերական այգիներ ստեղծելու միջոցով մինչև հնգամյակի վերջը այդ տարածությունը կրկնապատկել: Այգիների տարածության այսպիսի աճումը դեռ յերբեք էլ բավական չէ և վորոշվում է վոչ թե մեր պահանջներով, այլ անկելու մատերիալի այն քանակով, վորը կարող ենք ստանալ այս տարիներում:

Իսկ խՍՀՄ աշխատավորական մասսաների աճող պահանջներն այդ բնագավառում բավարարելու համար հարկավոր է այգիների տարածությունը այս ամենամոտիկ տարիներում առնվազն ավելացնել հինգ-վեց անգամ: Միայն այդ դեպքում մենք կկարողանանք այգեգործության բնագավառում հասնել Արևմտա-յեվրոպական յերկրներին և Ամերիկային, ու նրանցից էլ անցնել և միայն այդ դեպքում մենք կկարողանանք պտուղների միջին նորման յուրաքանչյուր անձի համար հասցնել մինչև 90 կիլոգրամի, վորսարենն այն 10—15 կիլոգրամի, վորն ունենք այժմ:

Քանի վոր այգեգործության զարգացումը մեծ չափերով, կանգ է առնում տնկելու նյութերի սակավության առաջ, ապա սովխոզներն անմիջապես պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնեն յեղած պտղային և հատապտղային բուծարանների լայնացման և նորերի ստեղծման գործի վրա: Կառավարության վորոշման համաձայն տնկարանների զարգացումը մերձակա յերկու տարվա ընթացքում պետք է տեղի ունենա, այնպիսի տեմպերով, վորպեսզի միայն ՌՍՖՍՀ սահմաններում մենք կարողանանք տարեկան ստանալ պտղատու ծառերի 45—50 միլիոնից վոչ պակաս տունկեր:

Այդ խնդրի իրականացման համար տնկարանների ընդհանուր տարածությունը (ուժ դաշտյա ցանքսավորության դեպքում) պետք է հասցվի 25 հազար հեկտարի:

Այդ արդեն հնարավորություն է տալու միայն ՌՍՖՍՀ սահմաններում յերկրորդ հնգամյակում այգիների տարածությունը հասցնել մինչև յերկու միլիոն հեկտարի և այդ այգիների նորմալ պտղաբերության դեպքում ստանալ պտուղների այնպիսի քանակություն, վորը գերազանցելու յե Արևմտա-յեվրոպական յերկրների նորման:

Նոր այգեգործութեան զարգացման հետ մեկտեղ անհրաժեշտ է անմիջապես սկսել կարգի բերել և վերականգնել հին այգիները:

Հին և խոպանացած այգիների վերականգման հիմնական միջոցներն են նրանց վերանորոգումը, արմատական պարարտացումը, ամառնացելը, արդյունաբերական տեսակների վերապատվաստումը, յերիտասարդացումը և այլն:

Ինչպես հայտնի յե, պտղի ջահել այգիները սկսում են պտուղ տալ 5—6-դ տարում, իսկ նորմալ բերք—10—11 տարեկան հասակում, խնձորենիների առանձին տեսակները—դեռ ավելի ուշ (որինակ, Ղրիմի տեսակները, ինչպես «կանդալ-սինապ»ը և «սարը-սինապ»ը, պտուղ են տալիս 18—20 տարեկան հասակում):


Այստեղից պարզ է, թե ինչպիսի նշանակություն ունեն գոյություն ունեցող հին այգիները և թե ինչպիսի խոշոր ուշադրություն պետք է դարձնել նրանց վրա: Չե՞ վոր մերձակա տարիներում պտղի մեր պահանջը բավարարվելու յե գլխավորապես հին այգիների բերքով: Իսկ այդ պահանջը շատ խոշոր է, վորովհետև թարմ պտուղները և մրգերը սնունդի անհրաժեշտ մթերքներ են:

Պակաս նշանակություն չունեն պտուղները վորպես հումուլթ անուշեղենների և կոնսերվների արդյունաբերության համար և վորպես արտածման մթերք:

Հին այգիները վորը են և ցիրուցան են: Նրանք վերին աստիճանի խոպանացած են և բացի դրանից ունեն մեծ քանակությամբ տեսակներ, վորոնց մեծամասնությունը չունի արդյունաբերական նշանակություն: Պարարտանյութերը այնքան քիչ չափերով են գործածվում, վոր այժմ այգիները բառի ամենալայն իմաստով սովի մեջ են: Այս բոլորը ուժեղացնում է ծառերի մահացումը և ցրտահարումը, անգամ այնպիսի ցեղերի և տեսակների,

վորոնք միանգամայն դիմացկուն են մեր կլիմայի պայմաններում:

Շնորհիվ նրա, վոր իմպերիալիստական և քաղաքացիական կռիվների հետևանքով այգիները համարյա բոլորովին անխնամ եյին թողնված և անգամ հիմա յեղ դեռ հեռու յեն պատշաճ խնամք ստանալուց, նրանց բերքատվությունը շատ չնչին է: Այսպես, միջին հաշվով մեր այգիների բերքը մի հեկտարից հասնում է 2,5—3 տոննի, այն ժամանակ, յերբ Ամերիկայում միջին բերքը մի հեկտարից հասնում է 13—18 տոննի: Շնորհիվ նրա, վոր մեզ



Նկար 1. ձերմակ թիթեաների բնրի վերցնելու յերկառ փայտով:

մոտ բավարար չափով չեն պայքարում վնասատուների և հիվանդությունների դեմ, բերքի անսլեաք մասը հասնում է 80 և ավելի տոկոսի: Բերքի անկումից և փչացածությունից ստացած վնասները հասնում են միլիոնավոր ուղբլինների:

Կուլտուրական բույսերը կարող են բարձր բերք տալ միայն այն ժամանակ, յերբ զարգանում են նորմալ կեր-

պով: Յե՛վ վորպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծենք նրանց նորմալ զարգացման համար, անհրաժեշտ է ուսումնասիրել յուրաքանչյուր բույսի առանձին տեսակների առանձնահատուկ կողմերը—նրանց պահանջները հանդես բնական պայմանների, հողի, պարարտացման, նրանց կաշտնութունը փաստատուների և հիվանդութունների դեմ:

Այգային կուլտուրաները վորպես բազմամյա կուլտուրաներ պահանջում են ավելի մեծ ուշադրութիւն, վորովհետև կատարված սխալները շատ դժվարութեամբ են ուղղվում բույսի կյանքի հետագա տարիներում: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր այգեգործ - կոլխոզնիկ պետք է գիտենա այգին խնամելու թեկուզ ամենահիմնական ագրոնոմիական աշխատանքները և դրանց կազմակերպելու միջոցները:

Այգեգործութեան ագրոմիխիմումը հանդիսանում է ցուցակն այն արտադրական աշխատանքների, վոր պետք է կատարել, այգու հողը մշակել, ծառերի բները և սաղարթը խնամել, այգու բույսերի փաստատուների և հիվանդութունների դեմ կռիւն և այլն:

Սովխոզները, կոլխոզները և արտադրական ընկերութիւնները պետք է միահամուռ կերպով անցնեն սոցիալիստական այգեգործութեան ընդլայնման, հին և խոպանացած այգիների նորոգման և վերականգման, բարձր բերք ստանալու և այգեգործութեան ագրոմիխիմումը լիակատար կերպով իրականացնելու գործին:

ԱԳՐՈՄԻՆԻՍՈՒՄ ԿՈՐԻՋԱՎՈՐ ՅԵՎ ԱՆԿՈՐԻՋ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԱՅԳՈՒ ՀԱՄԱՐ

Հողը խնամելը: Աշնան, բերքի հավաքից հետո, կամ վաղ գարնան՝ այգու ամբողջ տարածութիւնը պետք է հերկել: Վարը պետք է կատարվի այն խորութեամբ, վոր

թույլ են տալիս ծառերի արմատները (մոտավորապես 18—20 սանտիմետր): Ծառերի բների մոտի հողի փափկացումը (բնի շուրջը գտնվող հողամասը) կատարվում է ձեռքով՝ թիով կամ բահով:

Յեթե այգին առաջին անգամն է վարվում, ապա վարը պետք է կատարել զգուշութեամբ, վորպեսզի արմատները չփնասել: Հարկավոր է հիշել, վոր յերբ այգու հողը չի մշակվում, ապա ծառի արմատները, «խեղդվելով» ողի չի սակավութունից, բարձրանում և մոտենում են հողի մակերեսին: Բնամոտ հողի մշակումը կամ փորումը լավ արդյունքներ չի տալիս: Այդպիսի մշակման դեպքում արմատների մեծ մասը մնում է ամուր հողի տակ և առանց ողի:

Այն այգիներում, վորտեղ չի կարելի ամբողջ տարածութիւնը վարել, հարկավոր է ամբողջ հողը փորել:

Ամառվա ընթացքում այգու հողը պետք է հերկված դրութեան մեջ լինի, այսինքն պահպանվի փխրուն դրութեան մեջ և գերծ լինի փաստակար խոտերից:

Ամառը կուլտիվատորների (բազմակորպուսային գութանների, դիսկավոր ցաքանների) միջոցով պետք է հողը 3—4 անգամ փափկացնել:

Հիշի՛ր, վոր ամառնացելը հողում խոնավութիւն է պահում և վոչնչացնում է փաստակար խոտերը: Հենց միայն ամառնացելը կարող է բարձրացնել այգու բերքատիւթիւնը մեկուկես—յերկու անգամ:

Նոր, ջահել այգիներում, վորտեղ ծառերի արմատները դեռ չեն միացել, մոտեցել միմիանց, ծառաշարքերի միջև տարածութիւնը պետք է ոգտագործել բանջարանոցային կուլտուրաներ (կաղամբ, արմատապտուղներ, պոմիդոր, և այլն) մշակելու համար:

Այգու պարարտացումը: Այգին վարելիս վոչ ուշ քան մի տարուց հետո պետք է կատարել պարարտացում: Պարարտացման համար ոգտագործվում են գոմաղբ և հանջային նյութեր, ինչպես, որինակ, սելիտրա, սուլֆատամոնիա, սուպերֆոսֆատ, ֆոսֆորային և վոսկոուի ալյուր, կալիի աղեր և այլն:

Առաջին հերթին պարարտացվում են այն այգիները, վորոնք չունեն բավական սնունդ: Վորպես նշան այգ բանի կարող են ծառայել ճյուղերի չնչին մեծությունը, տերևի բաց կանաչ գույնը, տերևների դեղնությունը, մանր տերևները և նրանց քանակի սակավությունը, տերևների ժամանակից առաջ դեղնելը և թափվելը, վատ բերքը և այլն:

Պողատու ծառերը հողից մեծ քանակությամբ սնուդարար նյութեր են վերցնում: Այսպես, պողատու ծառերի այգին հողից վերցնում է բորակածնային նյութեր համարյա յերկու անգամ ավելի շատ, քան ցորենը, իսկ կալի պարունակող նյութեր—սուլֆիսկ չորս անգամ ավել: Շատերը շատ սխալ են կարծում, վոր այգիները կարող են մնալ և առանց պարարտացման:

Այգիների համար ամենից լավ բորակածնային պարարտանյութերն են: Ամենալավ բորակածնային պարարտանյութերից մեկը գոմաղբն է: Մի հեկտար այգու համար վորպես պարարտանյութ անհրաժեշտ է 40 տոննից վոչ պակաս աղբ: Աղբի պակասության դեպքում այգ չափը կրճատել չի կարելի: Նման դեպքերում այգին պետք է բաժանել յերկու մասի, և յուրաքանչյուր մասը լրիվ չափով պարարտացնել մի տարուց հետո:

Պարարտացումն ավելի լավ է կատարել բերքի հավաքից հետո, այն հաշվով, վոր հնարավորություն տրվի ծառերին՝ ուշժը հավաքել յեկող բերքի համար: Բերքի առատ տարում գարնանը ավելի լավ է պարարտացումը

կատարել՝ դեկավարվելով հետևյալ հաշիվներով. 2 ցենտներ ծծմբաթթվուտային ամոնիա, 2 ցենտներ կալիյի աղ և 4 ցենտներ սուպերֆոսֆատ կամ նրա փոխարեն 5—6 ցենտներ վոսկոր կամ ֆոսֆորիտային ալյուր:

Ծծմբաթթվուտային ամոնիան և ֆոսֆորիտային կամ վոսկորի ալյուրը նախ քան գործածելը լավ պետք է խառնել և ոգտագործել աշնանը (յեթե այգիներում շուրջի հավաքվում և կամ չեն գտնվում թեք տարածության վրա) կամ գարնանը վարելու ժամանակ: Մյուս պարարտանյութերը, ինչպես սուպերֆոսֆատը և կալիյի աղը, ոգտագործվում են գարնանը, ցաքանելու ժամանակ: Այստեղ բերված են պարարտացման միջին չափերը: Յուրատեղ բերված են պարարտացման միջին չափերը: Յուրաքանչյուր այգու համար առանձին՝ նայած հողին, այգու տարիքին և տեսակներին, չափերը սահմանում են տեղական գյուղատնտեսը կամ մասնագետ այգագործը:

Ծ ա ո ե ռ խ ն ա մ ե լ ը: Աշնան, տերևաթափի ժամանակ, կամ գարնանը, մինչև բողբոջերի բացվելը, կատարում են ծառերի մաքրում: Այդ մաքրման ժամանակ կտրում են. ա) ծառի բոլոր չոր մասերը մինչև դալար տեղերը, բ) հիվանդ և վնասված ճյուղերը, գ) այն ճյուղերը, վորոնք ուղղված են սաղարթի ներսը և խտացնում են այն, դ) միմիանց հյուսված ճյուղերը, ե) անպտուղ ճյուղերը, վորոնք առաջ են գալիս ծառերի վնասվելու հետևանքով, վորը հաճախ տեղի յե ունենում ծառերի բերքի անփութի հավաքի ժամանակ:

Հարավային շրջաններում, բացի այդ գործադրվում է ավելի բարդ թիմար: Այդ թիմարը կատարվում է գարնանը և նպատակ ունի կանոնավորել և նորմայի յենթարկել բերքը: Այդ թիմարի ժամանակ մի քանի տեսակների վերաբերյալ կատարվում է պողաբեր ճյուղիկների կտրատում: Այդ դեպքում ճյուղերի ծայրի ավելցուկը $\frac{1}{3}$ -ով

կարճեցվում է, կտրվում են բոլորովին կամ կարճացվում են ավելորդները, կտրվում են կողքի ճյուղերը և այլն:

Այդ բարդ թիմարը առաջին շրջանում պետք է կատարել գյուղատնտեսի կամ մասնագետ-այգեգործի ցուցմունքներով և ղեկավարությամբ: Պետք է հիշել, վոր ծառի ճյուղերի թիմարը իր տեսակի մի վիրահատություն է և դրա համար ել ավելի լավ է այն բոլորովին չկատարել, քան կատարել սխալ:

Ավելորդ ճյուղերը պետք է կտրել իրենց արմատից, սկիզբ առած տեղից: Խուլներ չպետք է թողնել, հակառակ դեպքում կարող են փթել և առաջացնել փշակներ:

Հաստ և անպտուղ ճյուղերի կտրումը կատարվում է այգեգործական սուր սղոցով: Կտրվածքները պետք է մաքրվեն այգեգործական դանակով, այնպես, վոր նրանց վրա խոնավություն, ջուր չմնա, հակառակ դեպքում կտրած տեղում կարող է առաջ գալ փթում, նեխում: Այն կտրվածքները, վորոնց չափը յերկու սանտիմետրից ավելի չէ, պետք է ծեփել հատուկ յեփվածքով կամ յուղաներկով:

Ծառերի բները և պսակի գլխավոր ճյուղերի արմատները անպայման պետք է մաքրել փթած, մեռած կեղևից և մամռախոտերից: Մաքրելուց հետո, չհանգցրած կրի լուծույթով կատարվում է սպիտակացում: Սպիտակացումը պետք է կատարել աշնան և կամ ծայրահեղ դեպքում, վաղ գարնան:

Բնի և գլխավոր ճյուղերի մաքրումը կատարվում է նրա համար, վորպեսզի դյուրացնել, լավացնել ծառի շնչառությունը և միևնույն ժամանակ վոչնչացնել վնասատուներին, վորոնք ձմեռում են կեղևի տակ:

Կրով սպիտակացնելը ծառերը ապահովում է ախպես կոչված այրումներից, վառվելուց:

Բերքի խնամելը: Պտղատու ծառերը և մասնավորապես շատ պտուղ տվող ծառերը պետք է ապահովվեն բավական քանակությամբ նեցուկներով: Պտուղը պետք է հավաքել ձեռքով՝ յեյարանների, պտղաքաղների ոգնությամբ. ճյուղեր թափահարելը վոչ մի դեպքում չի կարելի:

Ծառը բարձրանալը պետք է թույլ տալ ամենածայրահեղ դեպքերում: Յերբ ծառ բարձրանալն անխուսափելի անհրաժեշտություն է, ապա բարձրանալիս պետք է հազնել փափուկ վոտնամաններ, վորպեսզի առաջ չբերել ջարդվածքներ և քերվածքներ: Կոշտ վոտնամանի առաջ բերած քերվածքներից և վնասվածքներից առաջ են գալիս հոլած և շյուղեր, և շատ հաճախ ծառերը հիվանդանում են այսպես կոչված անտոնյան կրակով, վորը հետևանք է առանձին տեսակի սունկերի, վորոնց սաղմերը ընկնում են վնասված տեղերը:

Վորպեսզի անատուները չփշացնեն ծառերը և բերքը, անհրաժեշտ է իր ժամանակին կատարել ցանկապատի նորոգում և կամ նրա փոխարեն այգու չորս կողմը փորել արև, վորի բերանի լայնությունը պետք է լինի 1,5 մետր, հատակին՝—75 սանտիմետր, խորությունը — մի մետր:

Պայքար վնասատուներին և հիվանդություններին դեմ: Այգու միջի չորացած ծառերը, ավելորդ թփուտները և վայրի տեսակները պետք է արմատախիլ անել: Դրա հետ մեկտեղ պետք է արմատախիլ արվեն այն ծառերը և թփուտները, վորոնք չեն պաշտպանում այգին և ունեն այնպիսի վնասատուներ և հիվանդություններ, վորոնք ընդհանուր են նաև պտղատու ծառերի համար:

Աշնանը, տերևները թափվելուց հետո, կամ գարնանը մինչև բոխերի բացվելը, հարկավոր է ծառի բունը մաքրել մամուռից. սրանց մեջ բուն են դնում և ձու ածում վնասատուները, բացի այդ կատարում են սրսկում պղնձարջաս-

պի 5-տոկոսային լուծույթով: Այս աշխատանքը կատարվում է ծառերի թիմարից անմիջապես հետո:

Ծառերը սնկային հիվանդութիւններից (վորոնցից ամենավտանգավորը հանդիսանում է պարշան-քոսը) ազատ պահելու համար կատարում են սրսկում բորդոսյան հեղուկի 1-տոկոսային լուծույթով և կամ ծծմբակրային յեփվածքի խառնուրդով: Բորդոսյան հեղուկը պատրաստվում է պղնձարջասպի լուծույթի և կրի խառնուրդից: Ծծմբակրային յեփվածքը բաղկացած է ծծմբի լուծույթի և կրի խառնուրդից:

Մնկային հիվանդութիւնների դեմ սրսկումը կատարվում է յերեք անգամից փոշ պակաս: Առաջին սրսկումը կատարվում է այն ժամանակ, յերբ կոկոնները բացվելու վրա յեն, և վերջանում է, յերբ կոկոնները արդեն բացվել են, բայց չեն ծաղկել: Վոսկետոտոզ թրթուռի կամ թիթեռի յերևան գալու դեպքում, լուծույթին ավելացվում է փարիզյան կանաչ, յեթե սրսկումը կատարվում է փարիզյան հեղուկով: Իսկ յեթե սրսկումը կատարվում է ծծմբակրային յեփվածքով, ապա ավելացվում է Ղիպսին (կամ մկնդեղի և կապարի խառնուրդից պատրաստած հեղուկ):

Յերկրորդ սրսկումը կատարվում է ծաղկելուց հետո: Յերրորդը կատարվում է յերկրորդից 2—3 շաբաթ հետո:


Յերկրորդ և յերրորդ սրսկման ժամանակ պտուղները և տերևները փոշ միայն քոսից, այլև կրծող վնասատուներից զերծ և անվտանգ պահելու համար, բորդոսյան հեղուկին պարտադիր կերպով ավելացվում է փարիզյան կանաչ: Իսկ յեթե սրսկումը կատարվում է ծծմբակրային լուծվածքով, ապա ավելացվում է Ղիպսին:

Յերբ այդիններն ուժեղ կերպով վնասվում են վնասատու միջատների կողմից, ապա ծխախոտի ծխով նրանց

ծուխ յեն տալիս: Ծուխ տալը կատարվում է ամառը միջատների թեւափորման ժամանակ:

Յերկարակնճիթ բզեզների շատ յերևան գալու դեպքում նրանց թափ են տալիս ծառերի տակ փոված կտավների վրա:

Այդ թափ տալը կատարվում է 2—3 անգամ, ըստփորում այդ աշխատանքը պետք է սկսել նախ քան բոխերի բացվելը:




1007
34021

Նկար 1.—Թակարդներ կամ ողակներ՝ պտղակեր թրթուռներին հավաքելու համար:

Պտղակեր-թրթուռներին, յերկարակնճիթ-բզեզներին և այլ վնասակար միջատներին բռնելու համար մոտավորապես հունիս ամսում ծառերի ընների վրա դրվում են թակարդներ (ողեր), վորտեղ վնասակար միջատներից շատերը հավաքվում են ձմեռելու: Այդ թակարդները կարելի յե պատրաստել դարմանից, մամուռից, խոտից և այլ նյութերից: Ձմեռը այդ թակարդները վերցվում և վառվում են:

Տերևների թափվելուց հետո նախ քան վարելն անհրա-
 ժեշտ է այգին շատ լավ մաքրել: Հարկավոր է
 այգում յեղած բոլոր տերևները և աղբը հավաքել, այդ
 բոլորը վառել և մոխիրն ոգտագործել պարարտացման
 համար: Նմանապես անհրաժեշտ է ծառերից քաղել և
 վոչնչացնել նեխված և վարակված պտուղները:



Նկար. 3. Վոսկետտող թրթուռի ձմեռային
 բների վերցնելը մկրտաներով:

Ձմեռը կամ վաղ գարնան պետք է նայել ծառերը և
 քանդել, վերցնել ամրան սկզբներին յերևացող ճերմակ
 թիթեռների և վոսկետտող թրթուռի բները: Առաջինի
 բունը կարելի յե քանդել, վերցնել յերկար փայտի ծայրին
 անցկացրած կոշտ ցախավելի ոգնուլթյամբ: Յերկրորդի
 բները կտրվում են յերկար փայտի ծայրին անցկացրած
 այգեգործական կամ հատուկ դանակներով:

Նոր, ջահել ծառերը մկներից և նապաստակներից
 անվտանգ պահելու համար, հարկավոր է նրանց, (ծա-
 ռերի) բները փաթաթել փշատերև ծառերի ճյուղերով և
 բնի շուրջը հավաքել ձյուն և վոտներով լավ տրորել:
 Փշալից ճյուղերով փաթաթելը կատարվում է այնպես,
 վոր փշերը ուղղված լինեն դեպի ներքև:

Նոր, ջահել այգին պետք է խնամել նապաստակներից:
 Դրա համար պետք է հաճախ շրջել այգու մեջ և չորս
 կողմը, իսկ գիշերները նրանց վախեցնել հրացան կրա-
 կելով:

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵ-
 ԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՅՑՅՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ ՊԱՏ-
 ԲԱՍՏԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ

Թե յե՞րբ և ի՞նչ փաստաթուղթի կամ հիվանդության դեմ
 է գործածվում այս կամ այն միջոցը, դա ցույց է տրված
 ազդումինիմումում: Իսկ այստեղ բերվում է քիմիական
 լուծվածքներ և նյութեր պատրաստելու միջոցը:

Պղին ձարշա ս պի լ ու ծ ու յ թ ը: Այդ լուծույթով սըրս-
 կելը կատարվում է աշնան, տերևաթափից հետո, կամ գար-
 նան, մինչև բողբոջների բացվելը: Լուծույթն անպայմա-
 նորեն պետք է պատրաստել կավե կամ փայտե ամանի
 մեջ: Մեծ մասամբ գործ են ածում այնպիսի լուծույթ,
 վորի ամրուլթյունը 5 տոկոս է, այսինքն 120 դուլլի հա-
 մար վերցնում են 6 կիլոգրամ պղինձարշասպ: Ավելի
 ուժեղ լուծույթ (մինչև տաս տոկոս) կիրառվում է
 վայրենի կերպով աճած քարաքոսերի (лишайник) դեմ:
 Պղինձարշասպով սրսկելու ժամանակ գործ են ածում հով-
 հարած և՛ Սենեքի տիպի՝ փոշեցան:

Բների սվադումը կամ սպիտակացումը կրով կատարվում է կրի լուծույթով, վորի պատրաստման համար 120 գուլի ջրին լեցնում են 15 կիլոգրամ կիր:

Ծծմբա-կրային յեփվածք: Այդ պատրաստելու համար վերցնում են 12 կիլոգրամ չհանգցրած լավ կիր և 120—180 լիտր ջրի համար 24 կիլոգրամ ծծմբափոշի:

Փոքր քանակությամբ ջրի մեջ հանգեցվում է կիրը: Կիրը հանգեցնելիս՝ այն խառնելու ժամանակ, քիչ քիչ նրա վրա լցնում են ծծմբափոշի՝ ցույց տրված քանակով: Վորպեսզի այդ անելու ժամանակ ուժեղ տաքություն առաջ չգա, ավելացնում են վոչ խոշոր քանակությամբ սառը ջուր:

Ստացված խառնուրդը լուծում են 120—180 լիտր ջրի մեջ և 50—60 րոպե յեռացնում:

Ցեռացնելու ժամանակ խառնում են և նայած յեռալու չափին, աստիճանաբար ջուր են ավելացնում մինչև նախկին քանակը:

Ճիշտ պատրաստված լուծվածքը պետք է ունենա կարմրա-շագանակային գույն: Հեղուկը յեռացնելուց հետո թողնում են, վոր սառչի և նստի, վորից հետո յեփվածքը քամում են և սրսկելու համար գործածում լուծված դրության մեջ. ա) ծառերը սրսկելու համար (պղինձ-արջասպի փոխարեն) յեփվածքի մի մասին խառնում են 3—4 մաս ջուր, բ) քոսի դեմ սրսկում կատարելու համար (բորդոսյան հեղուկի փոխարեն) գործ են ածում ավելի թույլ լուծվածք:

Այսպես, հնդավոր պտղածառերի համար (խնձորենի, տանձենի) վերցվում է մի մաս լուծվածք և 40—50 մաս ջուր: Կորիզավոր տեսակների համար (բալ, սալոր, կեռաս, դեղձ և այլն)—մի մաս լուծվածք և 30—40—ջուր:

Սրսկումը ջրով գործ է ածվում «Ամերիկական ալրային ցող» կրիժովիկի հիվանդության դեմ: Վաթսուն լիտր

ջրի համար վերցնում են սովորական սողա 250 գրամ: Սրսկում կատարում են 4 անգամից վոչ պակաս (ամեն 10 րոպե հետո) և միայն ծաղկելու ժամանակ:

Բորդոսյան հեղուկը կիրառվում է սնկային հիվանդությունների դեմ, վորոնցից ամենատարածվածը քոսն է: Հեղուկն ստանալու համար 120 լիտր ջրին վերցնում են 1200 գրամ պղինձ-արջասպ և 800—1200 գրամ չհանգեցրած կիր:

Լուծվածքը պատրաստում են կավե կամ փայտե ամանի մեջ: Պղինձարջասպը լուծում են առանձին՝ վոչ խոշոր քանակությամբ տաք ջրի մեջ: Մի ուրիշ ամանի մեջ առանձին հանգցվում է կիրը: Գործածելու հենց սկզբում այդ լուծվածքները խառնում են: Ճիշտ պատրաստված բորդոսյան հեղուկը այրվածքներ չպետք է առաջացնի:

Փարիզյան կանաչը ոգտագործվում է կրծող ֆլասատունների դեմ: Խնձորենիները սրսկելու համար 120 լիտր ջրին վերցնում են 120 գրամ փարիզյան կանաչ: Տանձենիների համար—120 լիտր ջրին 95 գրամ: Կորիզավորների համար վերցնում են ավելի թույլ բաղադրություն, այսինքն 120 լիտր ջրին 75 գրամ:

Փարիզյան կանաչը միշտ էլ գործածվում է կրի լուծվածքի հետ խառնած (այսպես կոչված կրային կաթի հետ): Կիրը, նայած նրա վորակին, վերցնում են 3—5 անգամ ավելի քան փարիզյան կանաչը: Կիրը չեզոքացնում է մկնդեղային նյութերի ֆլասակար ազդեցությունը:

Խառնուրդ պատրաստելու համար փարիզյան կանաչը լցնում են ամանի մեջ, սրսկում ջուր և հարում, մինչև վոր ստացվում է խաշիլ: Այդ աշխատանքը պետք է կատարել զգուշությամբ և փարիզյան կանաչի վոշին չբարձրացնել, վորովհետև շնչելու ժամանակ կարող է թունավորում առաջ գալ: Փարիզյան կանաչի հետ խառնելուց առաջ

կիրը հանգցվում է առանձին ամանի մեջ: Այդ խառնուրդը կարելույն չափ պետք է լավ խառնել:

Քլորային բարիին գործադրվում է կրծող ֆլասատուների դեմ, գլխավորապես կրիժոֆիկի սղոցողի դեմ:

Վաթսուն լիտր ջրին ավելացնում են 1—3 կլիոզրամ քլորային բարի: Վորքան ավելի նուրբ են թփերը, այնքան քիչ քլորային բարի է վերցնում: Սրսկում են չոր, տաք յեղանակին, յերբ անցնում է ցերեկվա շոքը:

Ջիպսինը կամ մկնդեղաթթվուտային կապարը գործադրվում է կրծող ֆլասատուների դեմ: Վաթսուն լիտր ջրին ավելացնում են 50 գրամ Ջիպսին: Գործածվում է առանձին և կամ ծծմբակրային յեփվածքի հետ խառնած, վորպեսզի միասին ներգործի կրծող ֆլասատուների և քոսի վրա:

Ծխախոտային յեփվածքը գործածվում է ծծող ֆլասատուների դեմ: Ծխախոտի (ավելի լավ է մախորկայի) փոշին մոտավորապես մի ամբողջ ուր (24 ժամ) թողնում են 12 լիտր ջրի մեջ: Այնուհետև այդ բաղադրության վրա ավելացնում են ելի 12 լիտր ջուր և յեռացնում են 5—6 ժամ, ըստ վորում յեռացնելիս ամբողջ ժամանակ ավելացնում են ջուր: Յեփվածքը սառչելուց հետո քամում են և գործածելուց առաջ նրա վրա ելի ավելացնում են 48 լիտր ջուր:

Սրսկումը կատարում են այնպես, վորպեսզի յեփվածքն անմիջապես ընկնի միջատի մարմնի վրա, վորովհետև միայն այդ դեպքում է լավ արդյունք ստացվում: Ծխախոտային յեփվածքը մահացու կերպով վառում է միջատի մարմինը:

Ավելի լավ ներգործելու համար յեփվածքի վրա ավելացնում են 100—150 գրամ հեղուկ կանաչ ոճառ:

Կանաչ ոճառը գործ է անվում ծառավորչի դեմ. 1250—1500 գրամ 60 լիտր ջրին: Լուծվածքի պատրաս-

տումն արագացնելու համար նախորոք ոճառը լցնում են տաք ջրի մեջ: Սրսկումը, այրումներից խուսափելու համար, կատարվում է որվա յերկրորդ կիսում, յերբ ցերեկվա տոթն անցնում է:

Ծուխ տալը կիրառվում է հակախնձորային ծառայուների (листоблошка) դեմ: Ծուխ տալուց առաջ այգու մեջ հավաքվում են դարմանի, չոր տերևների կամ չոր դարմանի հետ խառնված աղբի կույտեր: Նման կույտեր հավաքում են այգու մարգամիջերի ծայրերում և նմանապես շարքերի մեջ գտնվող ծառերի միջև ամեն մի ծառից հետո:

Կույտերի դասավորումը շարքերում կատարվում է շախմատային կարգով և ամեն մի շարքից հետո: Ամեն մի կույտի վրա ցանում են 1,5—2 կլիոզրամ ծխախոտի փոշի: Այդ կույտերը վառում են ջահերով, — յերկար փայտեր, վորոնց ծայրին փաթաթում են նավթով թաթախած շոր և վառում:

Կույտերը պետք է վառել վորքան կարելի յե արագ, ըստ վորում հարկավոր է սկսել ծայրերից և քամուփչած կողմից: Պայքարի այդ միջոցը պետք է ձեռք առնել խաղաղ և քամի չեղած ժամանակ:

Պայքար այգիներին մկնեղի դեմ: Մկները պատուհաս են հանդիսանում գլխավորապես մատղաջ այգիների և բուծարանների համար: Մկներից անվտանգ պահելու միջոցներն են—այգու մաքրումը, աշնան հերկը և ծառերի մոտի ձնի տրորումը: Կանաչով ծածկված տեղերը և առանձնապես՝ հողում մնացած արմտապտուղները այգու մեջ գրավում են մկներ, վորոնք իսկույն բարձրանում են մատղաջ ծառերը և սնվում են նրանց մատղաջ կեղևով:

Պայքարի մի այլ միջոց էլ հանդիսանում է մկներին թունավորելը՝ նրանց հրապուրել կերը թունավորելով: Դրա

համար յեփած հացը մանր-մանր կտրատում են (մի կլիոզերամից ստանում են 2 հազար կտոր) և այդ կտորները լցնում են ցանցի մեջ ու սահում յերկու բոպե մինդեղա-թթվու-թային նատրիոնի լուծվածքի մեջ: Հացի փոխարեն կարելի յե վերցնել ցորենի կամ հաճարի հատիկներ և նորից թրջել նույն լուծվածքի մեջ:

Թունավոր լուծվածք պատրաստելու համար 24 լիտր ջրին ավելացնում են 800 գրամ մինդեղա-թթվուտային նատրիոն և լուծվածքին կպչող հատկութուն տալու համար ավելացնում են 800 գրամ շաքար կամ դոշաբ:

Այդ լուծույթում թրջված հացը կամ հատիկը դնում են մկների բների մեջ և կրունկով կոխտում բների բերանները:

ԱԳՐՈՒԿԱԶՈՐՆԵՐԸ ԱԳՐՈՍԻՆԻՍՈՒՄԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐՆ ԵՆ

Գյուղատնտեսութան սոցիալիստական վերակառուցման համար ձեռք առած միջոցները ապահովելու և հաջողութամբ անցկացնելու և նմանապես ազրոմինիմումի և խորհրդային իշխանութան այլ վորոշումները և միջոցառումները գյուղատնտեսութան բնագավառում իր ժամանակին կենսազործվելու համար ընտրվում են ազրոլիազորներ: Ազրոլիազորները ընտրվում են կոլխոզնիկների ընդհանուր ժողովում և ընտրվում են կոմյերիտներից, բատրակներից, առաջավոր չքավոր-միջակ գյուղացիներից, ախիվ կանանցից և այլն:

Այն գյուղերում, վորտեղ գյուղացիական տնտեսութունների կեսից ավելին ընդգրկված ե գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայում, ազրոլիազորները ընտրվում են գյուղական արտադրական ընկերութունների ընդհանուր ժողովներում: Այն գյուղերում, վորտեղ

գյուղացիական տնտեսութունների մեծ մասը միացված ե կոլխոզներում և նմանապես համատարած կոլեկտիվացման շրջաններում ազրոլիազորները ընտրվում են կոլխոզնիկների միջից:

ԱԳՐՈՒԿԱԶՈՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ, ԿՈՒՆՈՋՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՅԵՎ ԱՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Ազրոլիազորների հաջող աշխատանքի համար անհրաժեշտ ե.

1) Աշնանը կամ ձմռան կազմակերպել ազրոլիազորների մոտավորապես տասորյա դասընթացներ, վորտեղ գործնական կերպով մշակել տվյալ շրջանի գյուղատնտեսութան սոցիալիստական վերակառուցման վերաբերվող հարցերը, անգրագիտութան, ազրոմինիմումի կազմակերպման, անցկացման և այլ հարցերը:

2) Գործնական դարձնել ազրոլիազորների մի որյա կոնֆերենցիանների հրավիրում և այդ կոնֆերենցիաներում քննարկել նրանց աշխատանքի պրակտիկ հարցերը՝ նրանց վրա դրված պարտականութունների համապատասխան:

3) Գյուղատնտեսների և գյուղատնտեսութան մասնագետների հետ միասին հաճախ հրավիրել ազրոլիազորների խորհրդակցութուններ:

4) իր ժամանակին տալ հրահանգներ ազրոլիազորներին և ստուգել նրանց աշխատանքը:

5) Ազրոլիազորներին ապահովել հանրամատչելի գրքույկներով, թերթիկներով, պլակատներով, տեղական թերթերով և այլն:

6) ազրոլիազորներին գրավել պատի թերթի թղթակիցների շարքերը:

7) Լայն կերպով լուսաբանել ազրոլիագործների աշխատանքը, ազրոմինիմումի անցկացման գործում արած նվաճումները և այլ միջոցառումները գյուղատնտեսութայան սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

8) Աշխատանքի մեջ ձեռք բերած փորձի փոխանակութայան և գյուղատնտեսութայան բնագավառում ձեռք բերած գործնական նվաճումների լայն ոգտագործման համար կազմակերպել եքսկուրսիաներ դեպի որինակելի սովխոզները և կոլխոզները:

Որինակելի ազրոլիագործներին, վորպեո ակտիվ մարտնչողներին հանուն գյուղատնտեսութայան սոցիալիստական վերակառուցման գործի, անհրաժեշտ է առաջ քաշել մըրցման և նրանցից լավերին տալ մըրցանակ:

Ազրոլիագործն ինչպես պետք է գործնականորեն պետք է կազմակերպի ազրոմինիմումի անցկացումը: Ազրոմինիմումը մշակում են շրջլոլիսոզմիությունները: Մշակված ազրոմինիմումը նայում և հաստատում է շրջանային հողբաժինը:

Հաստատված ազրոմինիմումը տեղական պայմանների համաձայն յենթարկվում է գործնական վերամշակման գյուղխորհուրդներում, կոլխոզների վարչություններում, գյուղական արտադրական ընկերություններում, չքավորութայան խմբակների ժողովներում: Դրանից հետո ազրոմինիմումը լայն քննութայան է առնվում չքավորական ժողովներում, գյուղխորհրդներին, կոլխոզներին, գյուղական արտադրական ընկերություններին կից արտադրական խորհրդակցություններում և հողային ընկերությունների անդամների ընդհանուր ժողովում:

Ազրոմինիմումը բացատրելու և նրա անցկացումը գործնականորեն մշակելու գործին անհրաժեշտ է մասնակից դարձնել տեղական գյուղատնտեսներին, համապատաս-

խան մասնագետներին, դպրոցական աշխատողներին, խորհրդավարներին և խորհրդային գյուղի այլ կուլտուրական աշխատողներին:

Գյուղական կոմյերիամիությունը պետք է նախաձեռնողը լինի և ակտիվ կերպով մասնակցի ազրոմինիմումի անցկացման գործին: Ազրոմինիմումը ժողովներում ընդունվում է ձայների հասարակ մեծամասնությամբ: Ընդունված ազրոմինիմումը հաստատվում է գյուղխորհրդում: Ազրոմինիմումի մշակման և հաստատման հետ միաժամանակ անհրաժեշտ է չարամիտ խանգարողների համար սահմանել հասարակական ներգործման և պատժի միջոցներ:

Ընդունված ազրոմինիմումի համաձայն կազմվում է այն անցկացնելու գործնական որացուցային պլան:

Ազրոմիջոցառումները գործնական կերպով անցկացնելու համար այգեգործութայան ազրոմինիմումը բաժանվում է գյուղատնտեսութայան տարվա չորս շրջանի—գարնարային, ամառային, աշնանային և ձմեռային: Աշխատանքների գործնական պլանը յուրաքանչյուր շրջանի համար կազմվում է առանձին:

Առանձին ժամանակվա շրջանի համար կազմված ազրոմինիմումի անցկացման պլանը կազմվում է յեղնելով ընդունված ընդհանուր ազրոմինիմումից, ըստ վորում մի ժամանակաշրջանում չանցկացրած աշխատանքները կատարելու համար մտցվում են հաջորդ ժամանակաշրջանի պլանի մեջ, իհարկե յեթե տեխնիկապես դա հնարավոր է և գյուղատնտեսութայան տեսակետից ճիշտ:

Պարգութայան համար բացատրենք որինակելի: Յեթե յենթադրենք, վոր աշնան ազրոմինիմումի համաձայն նախատեսված էր այգուց աշնանը վարել 50 հեկտար և վարված է միայն 30 հեկտար, ապա մնացած 20 հեկ-

տարը պետք է վարել գարնանը և մտցնել գարնան ագրո-
մինիմումի մեջ:

Ագրոմինիմումի անցկացման պլանում հաշվի յեն առ-
նվում:

1) Այգիների տարածութունը հեկտարներով և խնձորե-
նիների, տանձենիների, սալորիների, կեռասենիների, դեղ-
ձենիների, ծիրանիների և այլ պտղատու ծառերի արմատ-
ների քանակը և նմանապես մալինայի, զեմլյանիկայի և
կրիժոֆիկի ու սմարոդինայի և այլ թփերի բռնած տարա-
ծութունը հեկտարներով և նրանց քանակը:

2) Այգու տարածութունը աշնան կամ գարնան հերկ
կատարելու համար: Գյուղատնտեսական գործիքների,
աշխատող անասունների պահանջը, տրակտորի աշխատան-
քի որերը և այլն:

3) Թիմարի յենթակա այգու տարածութունը: Կըտ-
րելու ժամանակը—ուշ աշուն կամ վաղ գարուն, այգե-
գործական գործիքների և դանակների կարիքը:

Այգիների համար պահանջվող—աղբը, հանքային պա-
րարտանյութերը, վնասատուների և հիվանդութունների
դեմ կռվելու համար անհրաժեշտ քիմիական նյութերը,
սրսկման համար պահանջվող ապարատները, նրանց պա-
հեստի մասերը և այլն:

5) Այգու նորոգման կամ պլանտացիա տնկելու հա-
մար անհրաժեշտ տնկանյութերի քանակը:

6) Ցանկապատերը կարգի բերելու և կամ բոլորովին
նորից կառուցելու համար անհրաժեշտ անտառանյութերի
չափը: Նորոգումը կամ կառուցումը պետք է կատարել
առանձնապես այգու այն կողմում, վորտեղից անցնում
են անասունները:

7) Բերքը հավաքելու համար անհրաժեշտ յեկարանների,
գամբյուղների, ցանցերի և այլն պահանջը:

Պլանը կազմվում է վոչ թե պլանի համար, այլ նրա
համարը, վորպեսզի բոլոր աշխատանքները կատարել լի-
վին, ճիշտ և իր ժամանակին: Վորպեսզի կարելի լինի
ճիշտ ոգտագործել յեղած մատերիալները, գյուղատնտեսա-
կան ինվենտարը, այգեգործական գործիքները, աշխատող
անասունները, տրակտորները, բանվորական ձեռքերը և
այլն, նշանակում են ամեն մի աշխատանքի կատարման
ժամկետները:

Ամեն մարդ գիտե, վոր մի շարք պատճառների շնորհիվ
աշխատանքի կատարման ժամկետները կարող են կրճատ-
վել կամ յերկարացվել, սակայն այդ հանգամանքը վոչ մի
դեպքում չի կարող հիմք ծառայել նրա համար, վորպեսզի
աշխատել առանց պլանի: Ընդհակառակը, պլանը հնարա-
վորությաւն է տալիս միշտ ել ձեռնտու յելք գտնել բո-
լոր դժվարութուններից: Պլանը կազմելու ժամանակ՝
հաշվի առնելով բոլոր աշխատանքները, մենք կկարողա-
նանք ճիշտ վորոշել, թե վոր աշխատանքը պետք է կատա-
րել առաջին հերթին և վորն առանց վորևէ վնասի կարելի
յե կատարել յերկրորդ հերթին:

Այգին խնամելու անպլան աշխատանքի ժամանակ հա-
ճախ կարելի յե նկատել, վոր առաջ, ասենք, կատարում
են ծառերի բների մաքրումը և նրանց սպիտակացումը
կրով, իսկ հետո կատարում են թիմարը: Կարծես թե այդ-
պիսի անտնտեսավարութուն դժվար է մտածել, բայց
իրականում այդպես լինում է:

Կոլխոզնիկ, հիշիր, վոր պլանը տնտեսության հիմքն է:

ԱԳՐՈՍԻՆԻՍՈՒՄԸ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ Ե ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿՈՒԵԿ-
ՏԻՎ ԿԵՐՊՈՎ

Ագրոմինիմումի հաջող անցկացման և լավ արդյունք-
ներ ստանալու համար այգիներում կատարվելիք բոլոր

արտադրական աշխատանքները պետք է անցկացնել խոշոր խմբերով և նմանապես միաժամանակ ամբողջ գյուղում և շրջանում:

Հասկանալի լինելու համար վերցնենք թեկուզ այնպիսի միջոցառումներ, ինչպես վերապատվաստումը կամ ծառերի տնկումը նոսրացած այգիներում և նմանապես պայքարը վնասատուների և հիվանդությունների դեմ:

Յեթե այդ բոլոր արտադրական աշխատանքները անցկացվեն անշատ, առանձին-առանձին, առանց միասնական պլանի՝ գյուղի և շրջանի համար, ապա ինչ կստանանք:

Այդ աշխատանքները տեղի ունենալիս յերկար տարիներ, բոլորը վերապատվաստելու և տնկելու յեն զանազան տեսակներով և զանազան տարիներում, շատերը պայքարելու յեն վնասատուների դեմ, իսկ շատերն ել վոչ: Նման պայմաններում մենք վոչ միայն չենք ստանա անհրաժեշտ արդյունքները, այլև կկործանենք ամբողջ գործը:

Վերապատվաստված և նորից տնկված ծառերից բերք ստանալու յենք զանազան, տարբեր տարիներում: Ստանալու յենք տարբեր տեսակների և վորակի մթերքներ, վորը իր հերթին թանկացնելու յե տեսակավորումը, պահպանումը, վորովհետև այդ բոլորը պետք է կատարվի տարբեր ժամանակներում և փոքր քանակությամբ:

Յեթե հարևան այգիներում չպայքարեն վնասատուների և հիվանդությունների դեմ, ապա այդ հանգամանքը շուրջն է գցելու տվյալ այգիներում կատարված ամբողջ աշխատանքը վնասատուների և հիվանդությունների դեմ կուվելու համար:

Բոլորովին այլ բան է, յերբ այդ բոլոր միջոցառումները անց են կացվում միաժամանակ և ամբողջ գյուղում կամ շրջանում: Դա կոլխոզին, գյուղական ընկերություն, անհատական տնտեսություն վարող չքավոր-միջակին ապա-

հովում է արտադրական հաջողություն և նմանապես դյուրաբացում և լավացնում է շրջանային կոոպերատիվ միություն միջոցով մթերքները սպառելու գործը: Այստեղից պարզ է, վոր կոլխոզների և արտադրական գյուղական ընկերությունների մեջ համախմբվելը այգեգործության և նմանապես ամբողջ գյուղատնտեսության արագ վերականգնման և զարգացման միակ ուղին է:

Կոլխոզիկներ, կազմակերպեք այգիների հասարակական վարում և փորում, կազմակերպեք շոկատներ վնասատուների և հիվանդությունների դեմ ամբողջ տարածության վրա համատարած պայքար անցկացնելու, ծառերը մաքրելու, բերքը հավաքելու, պտուղները տեսակավորելու և տեղավորելու համար:

Ապացուցեք կոլլեկտիվ աշխատանքի առավելությունները և յեղեք որինակ:

Հնգամյակի յերրորդ տարվա շեմին հացահատիկային տնտեսությունը հիմնականում արդեն վերականգնված է, և հսկայական աշխատանք է կատարվում կենդանաբուծության վերականգման և զարգացման համար: Իսկ այգեգործությունը ներկայումս ել դեռ գտնվում է զարգացման ցածր աստիճանի վրա: Այգեգործությունն այլևս չի կարող այդ դրության մեջ յերկար մնալ: Սովխոզները, կոլխոզները, գյուղական ընկերությունները և չքավոր-միջակ առանձին տնտեսությունները պետք է վճռական միջոցներ ձեռք առնեն այգեգործությունը վերականգնելու և զարգացնելու համար:

Բոլորը պետք է դուրս գան սոցմրցման՝ հանուն կոլխոզ-սովխոզային այգեգործության և բարձր բերքի:

Հին ու յերեսի վրա թողնված այգիները պետք է կանոնավորվեն և ապահովվեն գյուղատնտեսական խնամքով ճիշտ և իր ժամանակին:

Արտադրական կոնտրակտացիան պետք է դառնա այ-
գեգործության զարգացման և բերքատվության բարձրաց-
ման հզոր լծակը:

Արտադրական կոնտրակտացիայի միջոցով—առանց դեպի
կոլեկտիվացում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| 1. Նախաբան | 3 |
| 2. Վերացնենք հին այգեգործության թերությունները | 6 |
| 3. Ագրոմինիմում՝ կորիզավոր և անկորիզ պտուղների այգու համար | 10 |
| 4. Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու համար քիմիական լուծույթներ և նյութեր պատրաստելու միջոցները | 19 |
| 5. Ագրոլիազորները ագրոմինիմումի անցկացման ղեկավար- ները և կազմակերպիչներն են | 24 |
| 6. Ագրոլիազորները հանդիսանում են գյուղխորհուրդների, կոլխոզների, գյուղարտադրական ընկերությունների, տե- ղական գյուղատնտեսների և այլ մասնագետների ամենա- մոտիկ ոգնականները | 25 |
| 7. Ագրոմինիմումը այգիներում պետք է անցկացնել կոլեկ- տիվ կերպով | 29 |



8 ԿՈՊ.

19.813
Цена 8 н.
С.-Х. 7



АГРОМИНИМУМ
по садоводству
(Пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр. Никольская, 10

634.1

4-13